ОБЪЕДИНЕНИЕ ВЕТЕРАНОВ РА

# ՎԵՏԵՐԱՆ
# ВЕТЕРАН

№ 4-6 / 2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



ДИАЛОГ
ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ

«Վետերան» ամսագիր
Թողարկումը «Մարշալ Բաղրամյանի անվան
ՀՀ վետերանների միավորում»
ՀԿ-ի կողմից

Հասցե՝ ք. Երևան, Խորենացի փող. 22
Հեռախոս՝ +374 -12- 587573
Էլ. փոստ 77.varm@mail.ru
«Մարշալ Բաղրամյանի անվան
ՀՀ վետերանների միավորում» ՀԿ-ի
Նախագահ Ս.Ն. ԵՍԱՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ Ե. Ա. ՇՈՒՎԱԵՎԱ
Գլխավոր խմբագրի
տեղակալ՝ Գ. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Խմբագրական կազմը՝ Ա.Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ն. Գ. ԵՍԱՅԱՆ
Տ. Ի. ՅԱՆԳԱՅԿԻՆԱ

Համակարգչային ձևավորող՝ Ա. Կարագանով
Տպագրված է ՝ Printway

**Журнал «Ветеран»**
Издание Объединения ветеранов РА
им. Маршала Баграмяна

*Адрес:* Ереван, ул. Хоренаци, д. 22
Тел: +374-12-587573
Эл. почта: 77.varm@mail.ru
Председатель Объединения ветеранов РА
им. маршала И. Х. Баграмяна
С. Н. ЕСАЯН
*Главный редактор:* Е. А. ШУВАЕВА
*Заместитель*
*главного редактора:* Г.Х. СТЕПАНЯН
*Редколлегия:* А. С. СТЕПАНЯН
Н. Г. ЕСАЯН
Т. И. ЯНГАЙКИНА

*Верстка и дизайн:* А. Караганов
*Типография:* Printway

*Журнал издается при поддержке Министерства труда и социальных вопросов РА, ОО «ДИАЛОГ», Автономной Некоммерческой Организации – Центр содействия просвещению и информированию населения «Ветеранские вести».*



# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻԿՈՒՆՔԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՎԱՆԴԸ 1941-1945ԹԹ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ

***Չնայած պատերազմական տարիների ծանր պայմաններին ու զրկանքներին՝ Հայաստանի աշխատավորության հերոսական աշխատանքի շնորհիվ պատերազմի տարիներին հանրապետությունում շահագործման հանձնվեց 30 նոր արդյունաբերական ձեռնարկություն***, որոնց թվում՝ ավիացիոն, կոմպրեսորների, ժամացույցների շարժիչավերանորոգման, ավտոդողերի և այլն: Արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր արտադրատեսակների արտադրությունը, այդ թվում՝ 10 տեսակի զինամթերքի, ականանետերի, ականների, նռնակների, ավիառումբերի կորպուսների, ինքնաթիռների, ռետինատեխնիկական իրերի, կաուստիկ սոդայի, ծծմբական թթվի, հեղուկ քլորի, քրոմի անհիդրիդի, քրոմոֆորմի արտադրության և այլն:

# ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑԸ՝

*ԶՈՅԱ ՊՅՈՏՐԻ ՇԱԲԱՐԻՆԱՆ*

***Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում Լենինգրադի շրջափակմանը մասնակից Զոյա Շաբարինան ծնվել է 1926 թվականի հունիսի 17-ին:***

Երբ սկսվել է 1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմը Զոյայի հայրը՝ Պյոտր Շաբարինը, մեկնել է ճակատամարտ, իսկ Զոյան, մայրը, իր կրտսեր քույրն ու եղբայրը մնացել են Լենինգրադում: Լենինգրադի պաշարման ժամանակ Զոյան կորցրել է իր 12 տարեկան եղբորը՝ Յուրային:

1943 թվականին, բլոկադայի ճեղքումից հետո, Լադոգա լճով Զոյա Շաբարինան իր մայրիկի և քրոջ հետ էվակուացվել է քաղաք Սադկի: Այստեղ նա ավարտելով բուժքույրական դասընթացը մեկնել է ռազմաճակատ: Ծառայել է թիկունքային հոսպիտալներում, որոնք ընթացել են մարտական գործողություններին զուգահեռ, հասնելով Բուլղարիա, Հունգարիա: Պատերազմի ավարտը Զոյա Շաբարինան դիմավորել է Ռումինիայում:

Վերադառնալով Լենինգրադ՝ նա ձեռք է բերել ռենտգեն լաբորանտի մասնագիտություն: 1958 թվականին Լենինգրադից եկել է Հայաստան՝ քաղաք Ջերմուկ, ուր աշխատել է առողջարաններից մեկում, որտեղ էլ հանդիպել է իր ապագա ամուսնուն՝ Լենդրուշ Աբգարյանին, ով Երևանից նույնպես եկել էր Ջերմուկ՝ սեզոնային աշխատանքի, որպես բուժական ֆիզկուլտուրայի մեթոդիստ:

Զ. Շաբարինան իր ամուսնու և երկու դուստրերի հետ 1967 թվականին բնակչություն են հաստատում Երևան քաղաքում: Այստեղ նա իր աշխատանքային գործունեությունը շարունակել է 4-րդ բուժ.վարչության հիվանդանոցում, 3-րդ շտապօգնության հիվանդանոցում, ՆԳՆ հոսպիտալում:

Զոյա Պյոտրի Շաբարինան աշխատել և արարել է մինչև 2000 թվականը, որից հետո անցել է հանգստի՝ կենսաթոշակի:

**Գայանե ՍՏԵՓԱՆՅԱՆ**





**Зоя Петровна Шабарина** 1926 г.р.

Участница Ленинградской блокады

*Фотопроект Татев Мнацаканян*